

## **Ի՞նչ կը նշանակէ Հայ ըլլալ**

Երկրի մը մէջ ծնիլ, ուրիշ երկիր մը ապրիլ, տարբեր երկրի մը մէջ մեռնիլ և չորրորդ տեղ  
մը թաղուիլ:

Բազմաթիւ լեզուներ խօսիլ, սակայն ոեւէ մէկը կատարեալ չգիտնալ, մանաւանդ  
հայերէնը:

Անաստուած ըլլալու իսկ պարագային, եկեղեցի յանախել, կրօնական արարողութեանց  
հետեւիլ բան մը չհասկնալով:

Եկեղեցիի մը թաղական ըլլալ առանց անոր օրէնքները ճանչնալու:

Խոնարհ ըլլալ օտարներու հանդէպ և գոռոզ՝ իր ազգակիցներուն:

Ապրիլ օտար երկրի մը մէջ հայրենիքի կարօտով և հայրենիքի մէջ՝ օտար երկիրներ  
երագելով:

Ողբալ հայերէն լեզուին նահանջին, բայց տան մէջ օտար լեզուով խօսիլ:

Ընկերային դիրքը բարձրանալուն զուգահեռ հայութիւնը մոռնալ, զայն յիշել միայն երբ  
ծերութեան դուռը հասնի:

Ունենալ արեւելահայերէն և արեւմտահայերէն, երկու ուղղագրութեամբ:

Օտար լեզուով խօսիլ, հայերէն աղօթել, թրգերէն երգել և հայիոյել:

## **Ադրինէ Գաբրիէլեան**